ՓԱՍՏԱԲԱՆ ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ՀԱՐՑՈՎ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

15.02.2017 14:21

ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկը 14.02.2017թ. մերժել է կալանավորված անձ Ժիրայր Սեֆիլյանի պաշտպան Մուշեղ Շուշանյանի տեսակցությունը:

Ըստ փաստաբան Մուշեղ Շուշանյանի՝ ՔԿՀ-ն չի թույլատրել տեսակցությունը պաշտպանյալի հետ, քանի որ փաստաբանը հրաժարվել է իր մոտ գտնվող փաստաթղթերի՝ քրեական գործի առնչությունը պարզելու նպատակով ուսումնասիրության համար տրամադրել ՔԿՀ աշխատակիցներին:

Փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարին ուղղված 15.02.2017թ. գրությամբ նշել է, որ ՔԿՀ կողմից վկայակոչված կանոնակարգի նորմերի հիման վրա փաստաբանի մոտ քրեական գործի նյութերին չառնչվող այլ փաստաթղթերի հայտնաբերմանն ուղղված գործողությունն անհնար է կատարել առանց բոլոր փաստաթղթերի բովանդակությանը ծանոթանալու:
Նման գործողությամբ ՔԿՀ աշխատակիցները փաստացի հնարավորություն կունենան ծանոթանալու փաստաբանական գաղտնիք պարունակող այլ նյութերին, ինչպես նաև՝ չունենալով անհրաժեշտ գիտելիքներ կամ տեղեկություններ, հայեցողաբար գնահատելու փաստաթղթերի առնչությունը քրեական գործին:

Ըստ ՀՀ փաստաբանների պալատի դիրքորոշման ՔԿՀ աշխատակազմի նման վարքագիծը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին և ներպետական օրենքներին:

Բեռնել՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գրությունը

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

18.02.2017ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })